ՏԱՐԱԶԸ ԼՈՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ ՇԱԲԱԹԸ ՄԻ ԱՆԴԱՄ ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐԸ

№ 18 կիրակի մայիսի 22 | հինգերորդ տարի 1894

ԳԱՐՈՒՆԸ ԹԻՖԼԻՍՈՒՄ

—

Երրորդ չաբաթն է դնում ահա, որ Թիֆլիսի ազնւականների հողային բանկի տարեկան ընդհանուր ժողովների չնորհիւ, քաղաքս լցւել են մեր երկրի վրացի կրակոտ, եռանդուն իշխաններով իբրեւ ընտանիքների հետ։ Թիֆլիսի փողոցները, այգիներն ու ճեմելիքները այս օրերը մայրաքաղաքի են նմանւում, մեծ փողոցներով անկարելի է անցնել առանց մէկը միւսին հրելու։ Անչուշտ ընթերցողը կենթադրում է, որ Վրաստանի իշխանական այս ընտանիքները եկել են գեղեցիկ գարնանը սերուն Թիֆլիսում անցկացնելու, մի քանի չաբաթ վայելելու քաղաքիս հաճոյքը, ստանալու էսթետիկական զարճութիւն։ Ո՛չ, բնաւ ոչ։ Այդ բոլորին այստեղ բերող խթանը հողային բանկի ընդհանուր ժողովներն են, կուսակցութիւնների միմեանց դէմ մաքառումը և ոչ թէ իրանց երկրի անհատական վիճակի բարեկարումը։ Շատ ցաւալի է, որ այժմեան թատրը միայն փողի հիմնարկութեան մէջն է կամենում որոնել իր անդորրութիւնը։ Եւ աւելի ցաւալին այն է, որ նոյն իսկ առաջադէմ երիտասարդներից չատերն այդ բանկը համարում են մի կենտրոն, մի *ընդերուար*, որտեղից սփռւում է երկրիս բարօրութիւնը։

ԹԱԹՈՆ ԻԼԻՆ ՄԱՒՄԱՒԶԻ
Խմբագիր «Վէմերիա» լրագրի եւ նախագահ հողային բանկի վարչութեան

Ժողովներն իշխան Անդրոնիկովի նախագահութեամբ լինում են բանկի թատրոնում, որ կատարեալ մի պարլամենտի է նմանւում։ Բեմի վրայ փառաւոր բազմած են վարչութիւնը, վերահսկող մանաժողովը և այլ պաշտօնական մարմինները, մամուլի ներկայացուցիչները, պարտերում (պարլամենտի) բանկի անդամ-իրաւասուները։ Իսկ օթեակները, գալերէյը, ֆօյէն, կօրրիդորներն ու սանդուղքները լիքն են անթիւ ու անհամար իշխանուհիներով, իշխաններով և ազնւականներով։ Սրանց ոգևորութեան չափ չկայ։ Ծափահարութիւնները ու չուոցն էլ սաստիկ։ Ընկերութիւնը կուսակցութիւնների է բաժանւած։ Մէկի դրօշակակիրը բանկի վարչութեան նախագահ և «Վէմերիա» վրաց ամենօրեայ լրագրի խմբագիր իշխան Իլիա Ճաւճաւաձէն է, միւս կուսակցութեան դրօշակակիրը բանկի դիրեկտօր և վրաց դադարած «Դրօէքա» լրագրի խմբագիր իշխան Ի.

Մաչաբելին է։ Հռետորներն են պուբլիցիստներ՝ պ.պ. Նիկողայէ, Միքելաձէ, Թումանեան, Կեզելի, Մաչաբելի, Օրբելեանի, պինուորականներ, բժիշկներ, փաստաբաններ նայլն նայլն։ Մեր կարծիքով ափսոս ժամավաճառութիւն, այգքան աղմուկ փողի չուրջը։ Գոնէ պ.պ. բանկի անդամները հոգային և իրանց մայրաքաղաքը հիւր եկողներին ցերեկները խաչելու փոխարէն, գէթ երեկոներն աշխատէին զարճանութիւնները մատուցանել։ Մխիթ անյարմար կըլինէր, քանի որ այդ ժողովները չարունակւում են, երեկոները չատ էժանացած դնելով վրաց լեզուով ներկայացումներ լինէին, դասախօսութիւն լինէր գիւղատնտեսութեան վերաբերեալ, խորհուրդներ տրուէր։ Աշքէին ժողովրդական զբօսանքներ և սրանց նմանհարիւր ու մի օգտակար զարճանութիւններ։ Թէ չէ մի հինգ-տասը մարդկանց խաթրու, *այն էլ աստառը միայն փողը*, հազարաւոր հոգիներ գերի անել տօթին և խեղդել քրանքի մէջ, թէ ինչ է տեսնեն, ով է ուժ խայթում, ով է ուժ պախարակում, այդ աւելի քան ցաւալի երևոյթ է։ Մենք ցանկանում ենք, որ մեր բարեկամ վրացիները հրապուրւեն և յափշտակւեն աւելի վեհ գաղափարներով, սիրուն, ինչպէս իրանց վայել է, անվեհերութիւնը, զեղեցիկը և բարին։

---

*
* *

Դու վինդ ուռ, պարտէզի մէջ երգ հնչեցուր դիւթական,
Ես կախարդած չքնաղ երգից՝ մի քուն մտնեմ յափշտեան,
Սակայն շուրջս ճոխ բնութիւնն թագաւորէ ու ծաղկի,
Սակայն բարձրում վառւին աստղերն—փայլէ կամարն հրաշալի...

—

Մեղմ երազում, լուռ քնի մէջ տեսնեմ պատկերդ հրապուրիչ,
Ծաղիկները բացւեն, բուրեն, չողայ ջուրը կախարդիչ,
Ե՛րբ պիշերում պայծառ լուսինն պար է բռնում աստղերով,
Տարածում է խաղաղութիւն, հանգիստ սրտին անվրդով...

—

Եւ երգերը թռչունների նիրդաչնակեն հոգուս մէջ
Անմահութիւն դրւատելով—տիեզերքի կեանքին անվերջ,
Եւ Աստծոյ հրաշալիքի պարծանքները յափշտեան,—
Ո՛, վինդ ուռ, պարտէզի մէջ երգ հնչեցուր դիւթական։

Ե. *Կոստանեանց*

ՋԻՆԻՈՐ—ԲԱՆԱՍՏԵՂԾ

(Թումանեան քրոջ յիշողութիւններից)

—

Ամբողջ օրը առաւտւանից անձրև էր տեղում և միայն երեկոյեան ժամի 6-ին դադարեց։ Բայց երկինքը չըպարզւեցաւ, նա պարձեալ կապարանման էր երևում և ոչնչով չէր յիշեցնում այն հրաշալի կապոյտ երկինքը, որ առհասարակ միշտ լինում է հարաւում։

Մեր ժամանակաւոր հիւանդանոցի բակում մռայլ, անախորժ հայեացքով նայում էին վրանները։

Հերթապահ ֆելդշերները, սանիտարները և պեռւելեան քոյրերը՝ շորերը մինչև ծնկները հաւաքած, ցեխի միջով վրանից վրան էին գնում և նորից ետ դառնալով՝ փայտեայ տնակը մտնում, որ գտնւում էր բարձր սալի ստորոտում փոսերի մօտ։ Բակի մէջ եղած քսան վրաններում տեղաւորւած էին վիրաւորները, ամեն մէկում քսան քսան, իսկ տնակի մէջ տեղաւորւած էին տասն և չորս հոգի ամենածանր վիրաւորներից։ Ալ էր հերթապահի սենեակը, դեղատունը և այն փոքրիկ սենեակը, որը մինոյն ժամանակ ծառայում էր իբրև դեղագործի սենեակ և վիրակապ նիւթերի պահեստ։

Երեկոյեան, հիւանդներին նայելուց յետոյ, բժիշկները և միւս անձինք գնացին քաղաք, իրանց տները, իսկ հիւանդանոցում մնաց միայն ֆելդշերը, մէկ սանիտար և ես։

Այցելելով բոլոր վրանները և տալով իւրաքանչիւրին իր վերջին բաժին թէյը, ես ուղղուեցայ դէպի տուն։ Վրանների միջանցքներից անցնելիս՝ ես նկատեցի մի պինուր, որ դրան առաջ կանգնած՝ նայում էր դէպի հեռուն։

Նիհար ուսին ձգած մսխրագոյն խալաթը, որ փաթաթել էր համարեա նրա տգեղ կերպարանքը, կարծես թէ միաձուլւում էր իրան շրջապատող անհամակիր դրուեթեան հետ։

Ես կանգ առայ։

—Լսիր, սիրելիս, ասացի ես, ինչու դու դուրս ես եկել, դուրսը խոնաւ է և չուտ կարող ես ջերմախտով բռնւել։

—Ճշմարիտ է ձեր ասածը, քոյրիկ,—պատաս-

խանեց նա,—բայց ինձ համար անտանելի է դարձեալ վրանում նստելը. մանաւանդ մութին է վրանը և խեղդող օդը, որովհետև, անձրևի պատճառով, այսօր ամբողջ օրը իջեցրած են վարագոյրները։ Ինձ գրաւում է Տիրոջ աշխարհը, ես ուզում եմ տեսնել նրա հրաշալիքները։

Ապա փոքր ինչ լռելով՝ նա շարունակեց.—Ա՜խ, ես շատ եմ սիրում նայել՝ թէ ինչպէս ծագում է արևը, նոյնպէս և վերջալոյսը, կարծում եմ դրանից աւելի գեղեցիկ բան չկայ աշխարհում։

Նրա մոխրագոյն կերպարանքը կենդանացաւ, աչքերը փայլեցին։

—Ջո մրտեղն է վիրաւորած,—հարցրի ես, ցանկանալով խօսակցութիւնը շարունակել։ Նա իմ հետաքրքրութիւնը շարժում էր իր ոգևորութեամբ, որ խօսում էր բնութեան գեղեցկութեանց մասին։

—Ո՛չինչ, մի չնչին բան, ձեռքս է թռցրած, քիչ էլ կողս է քերթած։ Բայց այդ ինձ համար ոչինչ է դեռ, գլխաւորն այս է, որ աջ ձեռքս վիրաւորած է և գրել չեմ կարողանում, ահա այդ ինձ համար շատ ծանր է, վրայ բերեց նա և հառաչեց։

Ես պատրաստակամութիւն յայտնեցի գրել նամակ իր ծնողներին, կամ ում որ ինքը կը ցանկանայ։ Այդ բանը նրան չափազանց ուրախացրեց։

—Կնոջս հարկաւոր է գրել, նրա մասին ես շատ եմ մտածում,—ասաց նա կարմրելով։

Ես դնացի հերթապահի սենեակը և այնտեղից՝ թուղթ, թանաք ու գրիչ վեր առնելով, վերադարձայ վրանը։

Իմ հիւանդը տեղաւորուեցաւ իր մահճակալի վրայ, իսկ ես նստեցի սեղանի մօտ փոքրիկ, ցած աթոռին։ Մեր շուրջը տասն և երկու մահճակալների վրայ քնած էին, կամ ուրիշ կերպ ասած, պառկել էին վիրաւորները, մոխրագոյն վերմակների տակ ծածկւած. իսկ բոլոր այդ տխուր պատկերները լուսաւորւած էին, ծխից սևացած, կերոսինի փոքրիկ կանթեղով։

Խաղաղութեան մէջ, զարմանալի պարզութեամբ, լսելի էր լինում *յեւսդաւիդ* գինւոր Իվանովի ձայնը, որ ինձ նամակ էր թելադրում։ Ես բառառբառ չեմ յիշում այդ նամակի բովանդակութիւնը, բայց այսքան միայն յիշում եմ, որ նա ոտանաւորով էր ասում։ Ասում էր իր դէպի կինն ունեցած սիրոյ մասին, իրանց անջատման դառնութեան մասին, և այն ուրախութեան մասին, որ նրանք պէտք է վայելեն, երբ նա կը վերադառնայ պատերազմից։ Նա աւելի ու աւելի էր ոգևորւում, երբ սկսում էր խօսել իր ընկերների, նրանց տանջանքների և հայրենիքի մասին։

Ես հիացել էի, իմ առաջ կանգնած էր մի ոգեշնչւած պօէտ։ Ես աշխատում էի շուտ շուտ գրել, առանց կանգ առնելու, որպէս զի չընդհատեմ նրան և ստիպեմ նորից կրկնել։ Բայց լինում էին րոպէներ, երբ ես բոլորովին յափշտակւած՝ լսում էի նրան և կանգ էի առնում։ Ես այլ ևս չէի կարողանում ճանաչել նրան, նա բոլորովին կերպարանափոխւած էր, նա այլ ևս այն տգեղ, դեղնագոյն զինուորը չէր, որպիսին ես ընտելացայ տեսնել երկու շաբաթւայ ընթացքում։ Ո՛չ, նա բոլորովին ուրիշ մարդ էր, նրա դէմքը կեանք էր շնչում, երջանկութեան հաւատով, և դէպի իր շրջապատողները տածած սիրով, աչքերը շողշողում էին, դէմքը դեղնութիւնից դառնում էր թարմ և առոյգ։

Նա վերջացրեց։ Ես գրեցի փոստայի 3 թերթ, սրբագրեցի և տւի նրան կարդալու։

—Շնորհակալ եմ,—ասաց նա ինձ.—Տէրը կը վարձատրէ ձեզ, այժմ ինձ թեթևացած եմ զգում։

Ես խոստացայ, նոյն երեկոյեան, նամակը փոստատուն տանելու հերթապահութիւնից յետոյ. ես կատարեցի այդ յանձնարարութիւնը։

Մի քանի առաւօտ քոյրերի բնակարանից դուրս գալով, դրան մօտ ես հանդիպեցի Մարթա քրոջը։

—Շուտով հիւանդանոցը գնացէք,—ասաց նա,—այնտեղ մի մահամերձ հիւանդ խնդրում է ձեզ։

Իմ վրանում կային ամենածանր վիրաւորներ. նրանցից երկուի կեանքը մազից էր կախւած, և մտածելով, որ դրանցից մէկը կամենում է մահից առաջ յայտնել իր վերջին կամքը, ես չտատանեցի այնտեղ։ Բայց դեռ ես բակումն էի, ինձ կանգնեցրեց բժիշկը։

—Գնացէք սպանների (օֆիցերների) դատարկ բնակարանը,—ասաց նա,—ես հրամայեցի մեռնողին այնտեղ տանել։

Վերջին շաբաթը այդ վրանը պատարկ էր, բանակից էլ վիրաւորուած սպաներ չէին բերում, իսկ առաջիններն էլ Ռուսիա էին ուղարկուած։

Ես ներս մտայ։ Իմ աչքին պատկերացաւ մի յուզիչ տեսարան. մահճակալի վրայ, մահւան տապնաստում, չարչարւում էր յեղափոխ Իվանովը։ Նրա դէմքը մթնած էր, բերնից փրփուր էր դուրս հոսում անընդհատ, ամբողջ մարմինը ցնցելով պալարւում էր և պիպչում մահճակալին։

Նրա եռակը կանդնած էր մեր բարի սանիտար Թէօդորը և աշխատում էր պահել նրան մահճակալի վրայ։

Ես մօտ գնացի։

—Ձերն է,—հարցրեց նա կատակով։

—Իմն է,—պատասխանեցի ես,—տասն և եր[illegible] վրանից։

—Նա միշտ ձեզ էր հարցնում, և ինչ որ նամակի մասին յիշեցնում։

—Իվանով, այստեղ եմ ես,—ասացի ես, բռնելով հիւանդի ձեռքը։

Բայց նա ինձ չէր ճանաչում. նրա ձեռքը ցնցելով սեղմում էր իմ մատները, նրա ոսկորները շխշխում էին։ Ես չատ լողճում էի նրան։ Այդպէս տևեց մի քանի րոպէ։

—Ի՞նչ է պատահել նրան,—հարցրի ես։

—Ասում են ցաւրտը տւել է, մրսել է երեկոյեան, իսկ դիչերը սկսեց տանջւել։ Բժիչկն ասում է, որ նա հինգ կամ վեց ժամից յետոյ անպատճառ կը մեռնի։

Ցնցւեցայ ես, դեռ երէկ այդ մարդը չատ վախտում էր ապրել, յուսավառ էր, բայց ահա այսօր վախճանն է, և ի՜նչքան սարսափելի։

Հիւանդութեան բորբոքը մեղմացաւ, հիւանդը ձրւեցաւ; աչքերը բաց արեց, նա ինձ ճանաչեց։

—Նամակը, ուր է նամակը,—հեծկլտաց նա։

Ես խոնարհւեցայ դէպի նա, ասելով.

—Երէկ ուղարկեցի, հանդիստ եղիր, հոգեակս։

Խնդութեան ալօտ բոցը վայրկ նրա մարած աչերում. նա աշխատեց բան ասել, բայց չըկարողացաւ։

Նրա աչքերը յառած էին դէպի իր մահճակալի հանդէպ կախուած սուրբ Տիրամօր պատկերը։ Նա կարծես մէկ աղօթում էր։

Բորբոքումը աստիճ այժով սկսեց նորից նրան տանջել, ոսկորները խշխշում էին։ Նա խեղդւում էր փրփուրից, որոնց առաջն առնել ես չէի կարողանում սրբելով նոյնիսկ։ Ես ու Թէօդորն աշխատում էինք նրա գլուխը բարձրացնելու վեր և դնելու կողքի վրայ։ Նրա հեծեծանքները սարսափելի էին։ Բորբոքումն այդպէս տևեց մէկ երկու վայրկեան, և հիւանդը բոլորովին թուլացած ընկաւ անշարժ։

—Տէր, ներիր, սուրբ Աստուածամայր, ողորմիր, չընդունէ նրա սևացած, ցամաքած չրթունքները։

Զորս ժամից աւելի էր անցել։

Ես ու Թէօդորը յոգնում ենք և չենք կարողանում հիւանդին պահել աւելի յարմար դիրքում բորբոքումների ժամանակ։ Բոլոր այդ ժամանակը մեզ մօտ ոչ ոք չէր մտնում։

—Թէօդոր,—ասում եմ ես, խնդրիր բժչկին, գուցէ կարելի է նրան տայ մի որ և է բան, տառապանքները մեղմացնելու համար։

—Խնդրեցի, ասաց սանիտարը ձեռքը բացասական կերպով չարժելով,—չըտւաւ, նա ասում է մխիթարն է, անօգուտ կըլինի, որովհետև չատով կըմեռնի։

—Եթէ այդպէս է, վաղիր քահանայի եռակից, գոնէ լծոյ հաղորդութիւն տանայ։

Թէօդորը չտապեց քահանայի եռակից, իսկ ես մնացի միայնակ մեռնողի հետ։

Նրա մարմինը նորից սկսեց կծկւել, բորբոքումն աւելի սաստկացաւ, լուեցաւ մի սարսափելի, սիրտ պատառող ճիչ, Իվանովը ձգւեցաւ, և իմ առաջ, մի ակնթարթում, ընկած էր նրա անշնչացած դիակը։

—

Արեգակը պայծառ կերպով լուսաւորում է սենեակը, կիսաբաց աչքերն ուղղած են դէպի սուրբ պատկերը։

Վերջապէս դրան չէմբից տհա երևում է քահանան հին վերարկու հագած, իսկ նրա եռակից Թէօդորը։—Մեռաւ, ասում եմ ես կամաց, մի կողմ քաշւելով։

Բաւի հրէամիջեայ ձմեռնային (Շուեցարիա)

Մինչև երեք օր ես չըկարողացայ ուշքի գալ։ Այդ համարեա առողջ մարդու անսպասելի մահը, սաստիկ ներգործեց իմ վրայ։

Ցաճախ ինձ այնպէս էր թւում, որ մեռաւ ոչ թէ Իվանովը, այլ մի ուրիշը. և այդ ժամանակ ես մտնում էի այն վրանը, ուր մեզանում մեռածներին էին դնում։ Գետնի վրայ գրած էր տրխտակեայ սպիտակ դագաղը, իսկ նրա մէջ, միևնոյն մոխրագոյն վերմակով ծածկւած, պառկած էր բեազավոյ գինուոր Իվանովը։ Ես լռիկ նայում էի նրան և լցւած սրտով դուրս գալիս վրանից, աշխատելով գործով միաւ ժամանակ գոնէ մոռացութեան տալ նրան։

Թաղման օրը հասաւ, դագաղը բակը դուրս բերին։ Տեղական վաշտից ուղարկւած կարգ կարգ կանգնած գինուորներից դուրս եկան չորս հոգի և խաչակնքելով երեսները, անտարբերութեամբ բարձրացրին դագաղը և բլրակներից իջեցրին ներքև թմբուկների և փողերի սգալի ձայների ուղեկցութեամբ։ Արարողութեան կարգն արդէն կատարւած էր իմ գալուց առաջ վրանում։

Ես ակամայ հետևեցի դագաղին։ Մինչև գերեզմանատունն՝ շատ հեռու էր, ես չընկատեցի անգամ թէ որ փողոցներովն էինք անցնում, այնքան սաստիկ վշտացած էի։ Ես ափսոսում էի ոչ թէ Իվանովին, այլ այդպէս վաղաժամ հանդած ոյժին։ Որքան խղճալի էր պօէտը, որին վիճակւած չէր անգամ իր ետևից մի հեռք անգամ լծողնել։

Մենք տեղ հասանք, ես ուշաբերւեցայ։ Գերեզմանն արդէն պատրաստ էր, գինուորները խաչակնքեցին, բայց ոչ մէկը հրաժեշտի նշան չըտւաւ հանդուցեալին, բացի ինձանից։

Շարժւեց պարանը և դագաղը ծանր կերպով իջաւ ջրով լցւած գերեզմանը։ Ես մեքենայաբար վրան ձգեցի մի բուռը հող և չտապով հեռացայ —արտասուքները ինձ խեղդում էին։

Լ. Տ.

*
* *

Ամեն գիշեր, երբ աստղերն են փայփայում;
Ամենոգ փոռած ծովը ձիրհում՝ է հեռուն—
Տատապելով կարօտ սիրոյ զգուանքի
Միտս քեզ հետ խօսակցում՝ է միշտ գաղտնի...

—

Երբ պատահմամբ քրքիջ, ձայնածք, դիմակներ
Ամզոյն, անմիտ պաշարում՝ են ինձ, ընկեր,—
Խորասուզած մտքերիս մէջ ցանկալի,
Միտս քեզ հետ խօսակցում՝ է միշտ գաղտնի...

—

Ես երբ տրտում՝ սենեակիս մէջ մենացած,
Մերկ են հեղձուկ տանջում՝ են ինձ ցաւ, կասկած—
Կանչում՝ եմ՝ քեզ այրուած հոգով տենչալի,
Միտս քեզ հետ խօսակցում՝ է միշտ գաղտնի...

—

Նա չսում՝ է մատաղ թրթռոց, յոյս, միմռանք,
Նա պատմում՝ է կարօտ, իղձեր վառ ապառիկ,
Ես աչքերիս միջից իղձ ձիրհում ապիրհում
Յոգնած, լցւած քեզ է միայն աղօթում՝...

ԵՐ. ՊՕԼԵՑՆ

Կ Ի Ն Ը

ԸՆԾԵԼՈՒՄ, ՆԵՐԿՈՑՈՒՄ ԵՒ ԸՊՇԳՈՑՈՒՄ

*
* *

II. *Կինը ձևերկայում.* Ներկայ տնտեսական դիտութեան վերջին խօսքն այն է, որ դրամագլուխը հաւաքելու է մի նեղ, սահմանափակ խումբ մարդկանց ձեռք, իսկ մնացած ամբողջութիւնը—լինելու է վարձկան բանւոր, պրօլետարեատ։ Կինն այժմ վաղուց արդէն սկսել է կուլ գնալ դրամագլխի համար անհրաժեշտ հիմնարկութիւններում. ամեն տեղ դուք այժմ կըզտնէք կին-բանւորներ։ Աւելորդ է յիշել եւրոպական գործարանատէրերի կեանքը. նայեցէք մեր տնտեսագէտ *չետ մնացած* Կովկասին. Օրդուբադից, Կաղզանից, Արդահանից սկսած մինչև Բագու, Բաթում և Թիֆլիս ամեն մի քայլափոխում

դուք կըգտնէք կին-աշխատաւորներ։ Դեռ տնտեսական կեանքն այնքան չի հասել, որ նրանց քշի ուղղակի գործարան, քշի մրցելու, էժանացնելու վարձագինը և այլ բանուորների տունը քանդէ։

Բուրժուական աշխարհը հարստանում է բանուրի «*առեղծուած աշխատաւորներով*», կեղեքում է նրան. բանուորն աշխատում է դիմադրել։ Բուրժուան օգտւում է դիտուքեան բոլոր վերջին հնարներից—մեքենաներից—գործը թեթեւացնում և յանձնում կանանց։ Եւ ահա կինը մրցող հակառակորդ է տղամարդուն։ Քանի մեքենաներն աւելի են կատարելագործւում, քանի գործելն աւելի հեշտանում է, այնքան աւելի և աւելի երեխայի աշխատանքը, դուրս է քաշում ասպարիզից թէ՛ տղամարդու, թէ կանանց աշխատանքը, որովհետև երկուսից էլ էժան է ծախւում։ Այս պարզ երեւոյթն սոսկացնում է կապել երեխաների, կանանց հարցը բանուորական խնդրի հետ։ Նրանից դուրս չըկայ փրկութիւն։ Եթէ կինը խելացի է, նա չուտով ձեռք կըմեկնի բանուորական շարժմանը, որովհետև տնտեսական և հասարակական զարգացման ճակատագրական օրէնքները նրան քշում են դէպի այդ կողմը։ Սրանով կօգտւեն երկու կողմն էլ։ Առանց կնոջ մասնակցութեան պատմութեան ընթացքում չի կատարուել ոչ և է մեծ դէպք. յիշէքէք կնոջ դերը ֆրանսիական մեծ յեղափոխութեան մէջ և այլն։ Լուսաւոր երկրների կինն արդէն սկսել է այդ հասկանալ և մէջ մտնել...

«Տղամարդը և կինը միացած միայն կազմում են մի լրիւ ամբողջ մարդկային էութիւն. մի սեռը լրացնում է միւսին»—ասում է Կանտը։ «Մարդկային ամենապարզ միութիւնը, մարդկային անհատ ապրեգատը կազմւած է մարդուց և կնոջից»—պընդում է Սէն Սիմոնը, դարիս ամենամեծ գլուխներից մէկը։ Բայց ինչ ենք տեսնում կեանքում։ Բուրժուական հասարակութիւնն օր աւուր աւելի դժւարացնում է սեռերի այդ ազատ միացումը։ Բոլոր հասարակական արգելքների մանրամասն և բարեխիղճ քննութիւնը մեզ ցոյց է տալիս, որ այժմ տղամարդկանց և կանանց անպսակ մնալու ամենամեծ—եթէ չասենք *միակ*—պատճառը զուտ տնտեսական խնդիրն է։ Զըկայ ապրելու միջոց, չըկայ գործ, հնարաւոր չէ ընտանիք պահել, զաւակներ դաստիարակել—ինչպէս պահւի, ընտանիքի տէր դառնայ։ Եւ այս աւելի ծանրանում է քիչ ու շատ հասկացող մարդկանց վրայ։ Հետևանքն այն է լինում, որ մի կողմից բազմանում է պառաւած ապրիներին, միւս կողմից «ազատ ծերունիների» թիւը։

Բայց որքան պարզ, հասարակ և հեշտ լուծելի է մարդկային պահանջը, այնքան էլ նա անհրաժեշտ է ամբողջ մարմնի համար։ Ինչպէս կարելի է հացի և սեռական *բնազդի* կարիքները խեղդել։ Եւ ծնունդ է առնում անառակութիւնն իր լայն չափերով, որի բոլոր կորստաբեր հետևանքներն ու ծաւալն ամենքին յայտնի են։

Մի ուրիշ հարց. նայեցէք ներկայ *ընտանիքի* վրայ։ Նիւթական կարիքն արդէն ներս է մտել այդ տեղ։ Հնումն էլ կար այդ կարիքը, բայց այն ժամանակ ապրելն աւելի հեշտ էր։ Ամեն բանի չափող այժը փողն է, առանց նրան մարդ կորչում է. այժմ ամեն մարդ աշխատանք չի կարող գտնել մշտապէս։ Տղամարդը մի գործարանում է աշխատում, կինը մի ուրիշ, որդին հազիւ է հասնում 13—14 տարեկան հասակի, նրան էլ քշում են մի երրորդ գործարան։ Գալիս են երեկոյեան, քարանսարայի նման դիշերում և էլի առաւօտը նոյն կեանքը։ Աղքատ ընտանիքում մայրն աշխատում է, երեխաներին պահող, դաստիարակող չըկայ. հարուստ ընտանիքում մայրը շատ քիչ է մտածում այդ մասին. նա վարձել է տալիս աղախիններ և նրանց յանձնում որդոց «*կրթուխթիւնը*»։

Ո՛ւր է ուրեմն ընտանիք, երբ գործարանն է կուլ տալիս, երբ արհեստանոցի մրոտ պատերի մէջ են թաղում ամբողջ իրանց կեանքը ընտանիքի բոլոր անդամները։ Գուցէ կարծում էք, որ այդ «ընտանիքը» *առդրէ* է մնացել միջին և «բարձր» (ի հարկէ լոկ փողով) դասակարգերի մէջ։ Սխալւում էք։ Միջին դասակարգ ասած բանը վաղուց սկսել է անյայտանալ, մեռնել. նա դառնում է կամ վարձկան բանուոր կամ դրամատէր։ Այժմ տնտեսապէս շատ զարգացած մի քանի երկրներում կան միայն երկու դասակարգ—դրամատէրը և բանուոր—իրար դէմ կանգնած. զրկող և զրկուող—չահերի կատարեալ հակադրութիւն։ Այո, շատ երկրներում «ոսկի միջուկը», հասարակական երկու հակադիր ծայրայեղութիւնների



Ն. Ց. Նիկոլաճէ

այդ կապող օղակը վազուց կտրուել է։ Եւ այդ երկիրներում բանւորական կռիւն աւելի սուր կերպարանք է ստացել։

Չէք հաւատում. նայեցէք Կոկսէյի բանակի վրայ—դրանք «անդործների» (sanstravail) քաղցած խմբերն են՝—չտապում են Վաշինգտոն. հաց են ուզում հաց...

Խաժակ

(Կը շարունակուի)

(A la Գամառ-Քամիպա)

—

Բաւ է, եղբայր, երգը ճնշել *)
Ու միաձայն սովրեցնել,
Ժամանակը հասել է
Այդ քառաձայն տարածել։

Այո, լերինք լծով լծնդան,
Այո, բերանք լծով դոռան.
Մշակած երկեր դաշտերում
Հնչեն չորս ձայն—դիլ ուռան։

Ակօրդ զարնէ լծով հայը,
Ալալակէ մի-դո-ջա.
Երգն միաձայն այսուհետ
Քառաձայնից լծով դողայ։

Այսուհետև միաձայն
Վախկոտները լծով պոռան,
Տղայքս արդէն պատրաստ ենք
Գովել ազնիւ մեր չորս ձայն։

Ու չենք դադրիլ գովելուց
Մեր այդ ազնիւ հնչիւնը,
Մինչև երգը չըստանայ
Իրա հաստատութիւնը։

Միաձայնը մենք պրծանք.
Այժմ դիտենք մենք չորս ձայն.
Հա, դուչեցէք մի-դո-ջա,
Որ միաձայն երգ դողայ։

Կարա-Մուրզա

*) Պ. Կարա-Մուրզայի վերջին կոնցերտին երգուած։

ՓԻԼԻՍՏՈՆ

—

ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ՎԱՃԱՌՔ

(Երեակայութիւն)

Ն. Նիկոլաճէի

—

Մեր մէջ, մինչև վերջին ժամանակը չատ յաճախ տատասում էր վաճառքով աղջիկ ուղղ կամ աղջիկ մարդու տալը։ Ադամից սկսած մենք այնպիսի աղջիկ էինք ընտրում մեզ համար ամուսին, որ բաւական հարուստ օժիտ և լաւ աղգականներ ունենար։ Իսկ աղջկայ սիրտը, բնաւորութիւնը և զգացմունքը բոլորովին բանի տեղ չէինք դնում և չէինք գնահատում։

Սիրոյ և զգացմունքի այս առևտրական միջոցը ամենքն աչքի առաջ ունեն, բայց իր անօգուտ լինելու պատճառով նա մեզ ոչ զարմացնում է և ոչ նեղացնում։ Մենք աչքը վարժեցրինք այդ միջոցին, ուստի և հետաքրքիր մոռանում ենք։

Այս կեղծաւոր անպատիւ միջոցը դուր չի եկել մեր երիտասարդներից մէկին և մտածել է, նթէ ամբոյ մէջ մեր առաջին գործը առևտրական հաշիւ է, եթէ հասարակութիւնն արհամարհանքով է վերաբերւում այն ամուսիններին, որոնց միմիայն սուրբ սէրը միացրեց, իսկ սիրով և յարգանքով ընդունում է այն, որի միացնողը եղել է առևտրական հաշիւը, փոքրոգութիւն և կանացիութիւն է մարդու համար, որ նա հազար տեսակ միջոցներով թագցնում է հասարակութիւնից իր արարքը և գործ դրած միջոցը։ Եթէ հասարակութիւնը, ամուսնական գործին խակասէս առևտրական հայեացքով է նայում, մինչ

Հշխան Ի. Մաշտոցի

ևս այնքան կըստորացնեմ անձս և կըվարեմ վաճառականների նման. ոչ երբեք. այն ժամանակ տեսնենք, ով կարող է ինձ պախարակել, կամ խայտառակել»։

Այսպէս է մտածել յիշեալ երիտասարդը։ Այսպէս է նա վճռել, երբ իր ուսման կէսն արդէն աւարտել է։ Կազմել է հետևեալ ծրագիրը և մինչև անգամ կատարել է։

Վրաստանի քաղաքներից մէկում, ուր ամեն տեսակ մարդիկ, ուրեմն և աղջիկները էլ են գտնւում, այդ երիտասարդը գտել է մի օրիորդ, որ օժիտում 10,000 րուբլի է ունեցել։ *Օրիորդ է գտել* ասածս դուք պիտի հասկանաք, որ նա տեղեկացել է, որ այդ քաղաքում այդպիսի մի օրիորդ է բնակւում։ Այդ երիտասարդը գնացել է 10,000 րուբլի ունեցող աղջկայ ծնողների մօտ և նրանց յայտնել իր մտադրութիւնը.

«Թիֆլիսում ուսումս աւարտեցի. ևթէ կարողանայի Ռուսաստան գնալ և 3—4 տարի այնտեղ մնալ, հիանալի մարդ կըդառնայի։ Այն ժամանակ առաջնակարգ պաշտօն կըստանայի, լաւ ռոճիկ և մեծ անուն։ Բայց նիւթական միջոցս չի ներում,—դուք աղջիկ ունէք, առ այժմ տուէք ինձ 2000 րուբլի և ուղարկեցէք Ռուսաստան։ Կանոնաւոր ստորագրութիւն կըլսամ, որ Ռուսաստանից վերադառնալուց յետոյ լոլորովին առանց մերժելու ամուսնանամ ձեր աղջկայ հետ։ Նէ այն ժամանակ մնացած 8000 րուբլին էլ կըստանամ ձեղանից»։

Պատմութիւնը դեռ ևս չի որոշել, թէ այդ առաջկայի մասին խօսակցութիւնն որքան չարունակւեց, որքան ժամանակ ամուսնական վաճառք էին անում փեսան և աները, բայց նրանց առևտրի ապացոյցը, նրանց պայմանագրութիւնը, իբրև օրինակ և զարմացումն հետագայ սերնդին, Թիֆլիսի կօնտօրաններից մէկումն է մնացել։

Ով ուշադրութիւն է դարձրել մեր լրագրութեան վրայ՝ նա լաւ կիմանայ, որ մենք աշխատում ենք դուրալի և օգտաւէտ ծանօթութիւններ ժողովել։ Ուրեմն ընթերցողը հաւատացած պիտի լինի, որ վերոյիշեալ դէպքը հէնց լսեցինք թէ չէ՝ իսկոյն սկսեցինք այդ նոր տեսակ պայմանագրութիւնը փնտրել։ Ժամանակաւոր օրէնքը խիստ ծանր է վերաբերւելիս եղել այն մարդուն, ով ուրիշի գաղտնիքը կըյայտարարի։ Սրա պատճառով այն անձը, որ հաստատել էր յիշեալ պայմանագրութիւնը, մեր հազար խնդրանքին միևնոյն պատասխանը տուաւ. «Օրէնքը ինձ արգելում է ուրիշների գաղտնիքը յայտնել»։

Շատ աշխատելուց յետոյ, վերջապէս գրագիրների և ընթերցողների միջոցով այդ պայմանագրութեան բովանդակութիւնն իմացանք և թէև նրա պատճէնը չըկարողացանք ձեռք բերել, բայց մեր երևակայութեան չնորհիւ կարող ենք հետևեալը։ Մեր կարծիքով այդ պայմանագրութիւնն ահա թէ ինչպէս կըլինէր դրած.

ԿԻՆ ԸՆԵԼՈՒ ՄՈՒՐՀԱԿ

*«Այս օրուանից սկսած չորս ու կէս տարուց յետոյ, այսինքն 18** մարտի 18-ին պարտական եմ առանց մերժելու կանոնաւոր պահակով ամուսնանալ ազնուական Դաւիթ Շանդալաշվիլիի աւագ դստեր հետ, որի անունն է Դարիա, իր 1000 թումանոց օժիտով, որի հաշուից 200-թուման զուտ արծաթ կանխիկ ստացայ։—18 սեպտեմբերի 18**».*

Ազնուական Պետրոս Բոխիճէ.

Համալսարանում ի միջի այլոց աւանդում են և «մուրհակի իրաւունք» (вексельное право) անունով դիտութիւն, որի նպատակն է բացատրել և մեկնել մուրհակների իրաւունքները և կանոնները։ Այդ *իրաւունքի* մէջ ի միջի այլոց ասած է, թէ «մուրհակի բարձրագոյն նշանակութիւնը, կամ առաւելութիւնն այն է, որ համարեա թէ կարելի է զուտ փողի տեղ գործածել, որովհետև մուրհակ յանձնելը այս ու այն անձին չատ հեշտ է, միայն հարկաւոր է միւս երեսին մի քանի խօսք գրել, այսպէս. *հատուցէք այս ինձ, կամ այն ինձ մարդուն և յետոյ ստորագրութիւն։* Մուրհակի այդ իրաւունքը և արժանաւորութիւնը, մեր մէջ, այնպիսի մարդկանց էլ յայտնի է, որոնք համալսարանը մինչև անգամ երազումն էլ չեն տեսել։ Այդ օրինակը նօտարը եւ «սուդէբնի պրիստաւը» բոլոր պրօֆէսօրներից աւելի լաւ են տարածում մեր ժողովրդի մէջ...

Այժմ ենթադրենք թէ այն օրիորդի համար նրա ծնողների մօտ մի ուրիշ աւելի լաւ փեսացու յայտնուեցաւ, կամ թէ չէ աղջիկը մեռաւ, կամ օրիորդը ցանկացաւ իր սրտի ուղածի հետ ամուսնանալ, ուրեմն մէթէ մեր Դաւիթ Շանդալաչէվիլին իր արիւն-քրտինքով վաստակած 2000 րուբլին պիտի կորցնի։

Խելօք մարդու համար այդ հարցը տաքօրինակ չըպիտի լինի։ Ինչպէս պարտատէրը իրաւունք ունի իր պարտականից պահանջելու, որ վերջինս իր պարտքը այն երրորդ անձին հատուցանի, որին ինքը ցոյց կըտայ,—ամուսնական մուրհակը ևս այդ կերպով պիտի յանձնւի ուրիշին։ Ուրեմն Դաւիթ Շանդալաչէվիլին մուրհակի

երկրորդ երեսի վրայ պիտի մակագրի, թէ «ամուսնացեք իմ հարևան Զուբար Բուզիաչիլիի քրոջ հետ»։

Օրէնքի համաձայն՝ պարտականը առանց բան ասելու՝ պէտք է հատուցանի իր պարտքը այն անձին, որի անո՛ն նը մուրհակի վրայ վերոյիշեալ ձևով մակագրուած է։ Ուրեմն մեր Պետրոս Բոխիձէն էլ նշանակեալ ժամանակին գնդացիկ փրակ պիտի հագնի և պիտի գիտենայ թէ չորս ու կէս տարի առաջ գրած մուրհակը ո՛վ է բերելու, այսինքն բախտը և *մուրհակի իրաւունքը* իրան ո՛ւմ հետ կըմիաւորի։ Կարելի է երևակայել նրա զգացմունքի և ախորժակի գրութիւնը, երբ երևկոյեան ժամի 8-ին իր մուրհակի դօրութեամբ, կըյայտնուի պահակելու համար անչնորհք, տգեղ և անատամ մի պառաւ։ Ի հարկէ այդ ժամանակ փեսան իր գլխին վայ կը տայ և բարձրաձայն կազաղակի. «Սա անօրէնութիւն է, ես *բալիշեցի* ուրիշ աղջկայ հետ պահակել. իսկ այժմ ինչ որ անտէրի հետ են ամուսնացնում»։

Այդ ժամանակ մեզանից ոչ մի իմաստուն չի կարող համոզել այն երիտասարդ փեսային, որ չորս ու կէս տարում, մինչև անգամ եթէ պարտատէրը իր մուրհակն ուրիշին էլ չըյանձնէր, այնուամենայնիւ ինքը բնութիւնը կամ ժամանակը փոփոխութիւն կ'առաջացնէին այն օրիորդի բնաւորութեան մէջ, որի անունը մուրհակում յիշած է։ Ո՛վ կարող է նրան համոզել, որ չորս տարուց յետոյ պահակելու ժամանակ, եկեղեցում կըյայտնուի բոլորովին այլ բնաւորութեան, այլ վարք ու բարքի և կերպարանքի աղջիկ, փոխանակ այն օրիորդի, որին տեսել էր մուրհակ գրելու ժամանակ և հետը ծանօթացել (այն էլ եթէ իսկապէս տեսել է և հետը ծանօթացել)։ Պետրոս Բոխիձէն մինչև մահը հաւատացած կըլինի, որ իր աննըման իրան խաբեց, կամ իր իրաւունքի չափը անցկացրեց...

Ընթերցո՛ղ, չէ՞ որ խարուած Բոխիձէն ծիծաղաշարժ դրութեան մէջ է գտնւում, չէ՞ որ անտեղի է նրա բարկութիւնը և հայհոյանքը, անհիմն է նրա սրտունջը։ Հաւատացած եմ, որ այդ բանում մինչև անգամ երկար չես մտածի, այլ ուղղակի կասես. «ի հարկէ»։

Շատ լաւ, բայց այդ Բոխիձէն ինչ արաւ այնպիսին, որ մենք ամենքս ամեն օր անելիս չըլինենք։ Իրրև թէ, որ անհամբեր էր և թղթի վրայ գրեց այն՝ ինչ որ մենք չենք համարձակւում գրել և ծածուկ միջի մարդերի միջոցով անում ենք—միթէ նոյն բանի համար պիտի մեղադրենք Բոխիձէին։ Ի սէր Աստծոյ, ասացէք ինձ, ինչո՞ւ է նա այն մարդուց աւելի ծիծաղաշարժ, որը օժիտի պատճառով համարեա ծծկեր երեխայի հետ է ամուսնանում, կամ թէ չէ առանց ծանօթանալու աղջկայ բնաւորութեան հետ, օժիտից կուրացած, հետը պսակւելու խօսք է տալիս։

Այդ անհատների կանանց բնաւորութիւնն էլ այնպէս չուտ և բոլորովին կըփոխւի, ինչպէս մեր Պետրոս Բոխիձէի ամուսնացուինը։ Կարճ ժամանակից յետոյ նրանց կողքին էլ ուրիշ աղջիկներ կըյայտնուեն։

—

Ցարգելի ընթերցողնե՛ր, ամենքը *վաճառք են* անում և պարզ է՝ որ առևտուրի մէջ ոմանք օգտւում են, ոմանք վնասւում։ Բայց եթէ արդարացում մարդ ես, աչխատողի և վնասուողի հետ էլ հաւասարապէս պիտի ասես. «Սա անպատիւ վաճառք էր, պատւական և կրթուած անձերի մէջ այդպիսի վարմունք և խաբեբայութիւն չըպիտի լինի»։

Դ. Տ.-Դ.

գեղարուեստ

ԹԱՏՐՈՆ

Հայ մասնաւոր չրջաններում չատ չկրմ խօսակցութիւն կայ ազգային սեղանին հայ բեմը պահելու համար։ Թատրոնական գործին տեղական անձնաւորութիւնները, ինչպէս մեզ հաղորդում են, պատրաստականութիւն են յայտնում միանալ անցեալ տարւայ կոմիտեի հետ։ Հրաւիրում ենք հայ բեմի բարեկամներին չտապել, քանի ամառը վրայ չէ հասել և չեն ցրւել ամառանոցներ, օրինաւոր մի ժողով կազմել և չըմեռցնել հայ բեմը, մի պայմանով միայն, որ նա դալ սեզոնից լինի մատչելի ժողովրդին և բեմական պերտուարն էլ կազմած լինի մեծ խնամքով։

—

Ռուս դրամատիկ խմբի արտիստների ներկայացումները վերջացան և այսօրւանից սկսւում է բալետ։ Զընայած չոքին, թատրոնը յաճախ բոլորովին լիքն էր լինում հանդիսականներով, որովհետև խմբի կազմակերպութիւնը յաջող էր, չընայած, որ աչքի ընկնող արտաքին կարող ոյժեր չկային խմբի մէջ։

—

ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

—

Շուտով կալաժական բանկի թատրոնում կրլինի իտալական օպերայի բալետոն Զերլատօնի կօնցէրտը պիտանիստ Լիխինի մասնակցութեամբ։ Արդէն տոմսակները վաճառւում են։

—

Կարա-Մուրզայի երրորդ կօնցէրտը Հալաբարում կրկայանայ. առաջիկայ չաբաթ։

—

ԴՊՐՈՑԱԿԱՆ
ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆ

—

Հայերէն գրութեան ձեռնարկս կազմելիս նպատակ ունէի.

Նախ՝ առաջին բաժանումից մինչև վերջը միատեսակ գրերով առաջնորդելու։

Երկրորդ՝ գրքի մէջ պարզութիւն պահպանել, ազատելով ամեն տեսակ զարդերից և մթութիւններից։

Երրորդ՝ տառերը իրար հետ կապել, միայն տառերի ձևը չըխախտել։

Չորրորդ՝ դիւրութիւն պատճառել գրողին ֆիզիքապէս և տեսողութեան՝ գրելիս և կարդալիս։

Սրանց հասնելու համար հետևեալ միջոցներն աչքի առաջ եմ ունեցել։

Թէք գծերի տեղ ուղղաձիգն ամրընդունել, թէ ուղղաձիգ և թէք հորիզոնական գծերի հեռաւորութիւնները հաւասարացրել եմ, բացի նեղքի չորրորդ և հինգերորդ գծերի հեռաւորութիւնը, որը կազմում է տարածութեան $^3/_4$ մասը, տառերի ծայրերի ոլորումը հեչացնելու համար. հնարաւորի չափ խմբակներն եմ բաժանել և այն ուղղաձիգ գծերը, որոնցից տառերը պէտք է կազմել և երեք կամ չորս գծի մէջ են ձևերի բնական չարժման համաձայն և առանձնապէս հայերէն տառերին յատուկ բարակ

սկսում են և աստիճանաբար հասանում։

Ուղղաձիգ գծերի անհրաժեշտութեան մասին «Տարազ» № 13 արծարծեցի, որի մէջ բացատրած են թէ՛ գծերի վնասակարութիւնը և ուղղաձիգների օգտակարութիւնն առողջութեան և կարդալու տեսակէտից։

Սրա վրայ ասելացնում եմ հինգ տարբեր պիտոդութիւններից այն, որ թէ՛ գրող աչակերտն ուշի ուշով հետևելով գրութեան կանոններին, այնու ամենայնիւ վատ է դրել՝ քան այն ծոյլ, չարաճճի և անընդունակ աչակերտը, որ իր ընկերի համեմատութիւնով ուղիղ է գրել։ Նոյնն է հանդիպել, երբ ուղղաձիգ և հորիզոնական գծերի հեռաւորութեան համեմատ է եղել գրածը, այսինքն աչակերտն ասելի արդիւնք է տացել քան երբ ուղղաձիգները մօտ-մօտ է ընդունել։ Տարածութիւնների հաւասար ընդունելու յարմարութիւններից մէկն էլ այն է, որ տառերի պարզ որոշելուն նպաստում է. այս ձևով որքան մանր գրելու լինինք, երբէք պարզութիւնը չեն կորցնում և միշտ հեշտութիւնով է կարդացուում։

Տառերը հետևեալ խմբերի են բաժանած՝ 1) ա, ա, ո, է, ո, ու. 2) ա, գ, կ, եւ, է, ճ. 3) յ, ց, ծ, ժ, ծ, ն. 4) ղ, ե, ը, ը, ի, ի, ք. 5) է, ր, ի, ու, վ, մ, օ. 6) է, ը, չ, գ, ղ, վ, շ, ջ։ 1) Ա, Տ, Ն, Հ, Տ, Ո, Ռ. 2) Պ, Յ, Կ, Խ, Ց, Ի. 3) Ե, Է, Մ. 4) Բ, Ի, Ի, Փ, Բ, Ֆ, Ֆ. 5) Օ, Գ, Զ, Ձ, Ժ, Ճ, Թ. 6) Լ, Ը, Ջ, Շ, Ջ, Ղ, Վ, Ջ։

Ինչ վերաբերում է վերջին պայմանին՝ հարկաւոր է միայն համոզել, որ մեր տառերի բնաւորութիւնն ասելի գոհական է, սուր է, թէև ոչ բոլորովին, նոյն իսկ փորձով կարելի է համոզել սրա բնականութեան վրայ։

Թէև վանդակներով—ուղղաձիգ և հորիզոնական գծերով—գրելը նախալատուած ընդունել եմ, բայց կրկին մի անբնականութիւն է ներկայացնում։

Գրութեան նպատակն է պարզ, տառերի բնաւորութեան համաձայն վայելուչ, մանր, արագ և առանց տողի գրել, ահա այս բոլորին արգելք են լինում առհասարակ գծերը։ Գրողի ձեռքը մի տեսակ կաշկանդում են. աչակերտը սովորած լինելով գծերի զուգահեռութեանը, նրանց բացակայութեան միջոցին խիստ տարակուսանքի, ձեռքի դանդաղութեան և անվստահութեան մէջ է ընկնում, կարծես թէ առանց տողի նոյն տառերը և նոյն մեծութիւնով նոյն իսկ անհնար է երևում դրել։ Սրա փորձն աւելի զգալի է լինում տողաչարի զուգահեռութեան միջոցին. տողաչարը վերանում է թէ չէ՝ համարեա աչակերտների 95% միանգամայն չէ կարողանում տողի ուղղութիւնն որոշել, նոյն իսկ ժամանակի ընթացքում։ Բայց այս, աչքերը չարունակ լարած գրութեան մէջ են լինում, որ նոյնպէս կարող է վնասներ առաջացնել, երբեմն էլ աչակերտը աչքերի լարմանը չդիմանալով՝ մխալանքների մէջ է ընկնում տողերի վերաբերմամբ։

Թէև ես ինքս չեմ փորձել առաջին բաժանմունքում, սակայն հիմնեալով աւելի մեծ դասարանների փորձերի վրայ, մեծ աշխատանքով փոքրաթիւ աչակերտներից կազմած դասարաններում միանգամայն հնարաւոր կլինի առանց գծերի, սովորական թղթից կազմած տետրակներով անցնել։ Թէև մեր առաջարկած եղանակը—առանց գծերի անցնել—ուսուցչի և մասամբ աչակերտի վերաբերմամբ դժուարութիւններ է առաջացնում, սակայն անօրանալի է, որ գրողի համար մի գանձ է, առանց որևէ մեքենայականութեան՝ բնական դիտողութիւններով և ձեռքի վարժութիւնով որոշել տառերի տեղը, համեմատական մեծութիւնը և տողի ուղղութիւնն ազատել՝ աչքերին ամեն տեսակ արհեստական գծերից։

Այս բոլորից յետոյ միանգամայն նպատակայարմար կլինէր մանկավարժական տեսակէտից տպագիրը և մեծատառերը վերացնել և փոխարինել իմ կազմած փոքր տառերով, քանի որ դրանք մի անհրաժեշտ հիմնաքար չեն լեզուի համար. մանաւանդ վերջիններիը, որոնք միջին երկաթագրերից յետոյ են գործածել երկաթագրերը մուտացութեան չդատելու համար։

Դարձեալ ասացին բաժանման լեզուի դասագիրքը կազմելիս պէտք է աշխատել, որ տառածանօթութիւնը համերի համեմատ ընթանայ, պրութիւնն և լեզուն փոխադարձաբար իրար լրացնեն միևնոյն աւանդողի միջնորդութիւնով*)։

Ուսուցիչ
Սարգիս Տէր-Գրիգորեան

ԹԱԳՈՒՀԻ ԿԱՅՍԵՐՈՒՀԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ

Մայիսի 15-ին, Նոցա Կայսերական Մեծութիւնների սրբազան թագադրութեան տօնի առիթով, Բօրժոմի եկեղեցում մաղթանք կատարեց, որին բարեհաճեցին ներկայ լինել՝ Նորին Մեծութիւն Թագուհի Կայսերուհին, Մեծ Իշխանուհի Կսենիա Ալէքսանդրօվնան Մեծ Իշխանները, սվիտան, վարչութիւնը և ժողովրդի ահագին բազմութիւն։ Նախաճաշից յետոյ Թագուհի Կայսերուհին Մեծ Իշխանուհի Կսենիա Ալէքսանդրօվնի հետ միասին բարեհաճեց ճանապարհ ընկնել, մէկ ժամ և 20 րոպէին, Ախալցխա, ուր հասան երեկոյեան չորս ժամին։ Բարձրադոյն ճանապարհորդներին դիմաւորեցին դօրքերը։ Մուտքի ժամանակ երաժշտական խումբը կատարեց ժողովրդական օրհներգը։ Քաղաքապետը թախտ ունէր աղ ու հաց մատուցանել արծաթէ մատուցարանով. հանքարներից կանգնած էին իրանց պրօշակներով։ Լսում էր անվերջանալի «ուրա»։ Երեկոյեան 6 ժամին բարեհաճեցին Ա.քահեպիսկոպոսման, ուր Նրանց դիմաւորեցին՝ Օլսուֆիէվ, Գուրչին և ուրիշ գեներալները։ Մուտքի ժամանակ երաժշտութիւնը կատարեց ժողովրդական օրհներգ։ Ա.քահ-Թումանի հասարակութիւնը մատուցեց աղ ու հաց, իսկ ծովագնացները՝ ձագիլների վնջեր։ Շինուած էին յատկական կամարներ. փողոցները զարդարուած էին

*) Տես «Հայոց գիրը», Խահակ Ցարուխիւնեանցի, 1892 թ. երես 394։

ծաղկամէլերով, պլօշակներով և լուսաւորւած էին։ Մանաւանդ գեղեցիկ էր լուսավառութիւնը շրջապատող լեռների վրայ և պալատում։ Պալատի առաջ տեղի ունեցաւ հրավառութիւն։ Ամարանոցներից չատերը զարդարւած էին տրանսպարանտներով։ Եղանակը լաւ է»։ „Кавказъ“

——

Տաճիր յուրեր

—

Թագաւոր Կայսրն ամենաողորմածաբար բարեհաճել է թոյլատրել հանդանակութիւն բանալ Թիւրքիայի և Երևանեան, Ղարսի նահանգներում հայ սովեալների համար։

—

Այսօր, կիրակի, ի Տէր հանգուցեալ Թագուհի Կայսրուհի Մարիա Ալեքսանդրովնի մահուան օրը Սիօնի մայր եկեղեցում կատարւելու է հոգեհանդիստ։

—

Ս. Էջմիածնում վեհափառ Կաթողիկոսի կոնդակով սինօդի անդամ վահան վ. Տէր-Գրիգորեանի նախագահութեամբ կազմւած է մի մանաժողով սովեալներին նպաստ բաժնելու համար։ Մանաժողովի անդամներն են Սահակ Այվազեան, Ներսէս Չայկազունի և Սահակ Ամատունի վարդապետները, իսկ քարտուղար Յուսիկ սարկաւագը։

—

Բժշկապետ Զախարինը, ինչպէս մեզ հաղորդում են, այժմ սաստիկ հետաքրքրւած է Արտաթումանի անցեալով։ Նա պահանջել է մանրամասն տեղեկութիւններ թէ օրերից այնտեղ բժշկողների և թէ մասնաւոր հիւանդների մասին։

—

Ինչպէս երևում է այս տարի Աբասթումանի ամարանոցի չատ բնակարաններ կըմնան դատարկ։

—

Երկրագործութեան և պետական կալւածների մինիստրութիւնը վճռել է Սև ծովի արևելեան ափում՝ Սուխումում և Սոչիում բանալ գիւղատնտեսական հիմնարկութիւններ, ուր պէտք է փորձեր կատարին տրոպիկական և ուրիշ բոյսերի մշակման և պարզացման մասին։

—

«Մշակը» մինչև օրս սովեալների օգտին ժողովել է 5007—72 կ. և պարբերաբար տեղ հասցրել։

—

Մշակը լսել է, որ Երզերումում մի փոքրիկ մանաժողով է կազմւել սովեալներին օգնելու համար։

—

Դրիզոր Արծրունու արձանի և գրւածքների տպագրութեան համար մինչև այժմ Մշակն ստացել է 3300 ր. աւելի։

—

Աչըղեան Կ. Պօլսի հայ պատրիարքը դրականապէս վճռել է իր պաշտօնը թողնել և ոչ մի պայմանով հետ առնել չի ցանկանում իր հրաժարականը։

—

Մայիսի 10-ին Կ. Պօլսում վերաբերւած է հայաղն Սիմոն-բէյ Մագասեան, տանձայց պաշտօնեայ։ Յանցաւորները չեն փախել, այլ անձնատուր լինելով ոստիկանութեան, յայտնել են, որ իրանց պարտքն են կատարել։

—

Լօնդոնի բիբլիական ընկերութիւնը, ինչպէս հաղորդում է Մշակը, ս. Էջմիածնի տպարանին ընծայել է ամենալաւ տեսակից մի տպագրիչ։

—

Երէկ, արևմտեան Կովկասինւածման տարեդարձին, Ալեքսանդրեան այգու ներքին ալէյում գոհացողական մաղթանք կատարւեց։ Ներկայ էր զօրքի մի մասը, մի քանի խումբ պինուրական երաժշտութիւն։ Ըրձակեցին 21 անգամ թնդանօթ և այլն։

—

Էրզրումի վիլայէթում, «Մշակն» ասում է, որ խօլերան սկսել է սաստկանալ։ Տեղական թուրք իշխանութիւնն ոչինչ միջոցներ ձեռք չէ առնում այդ ախտի առաջն առնելու համար։

——

ԱՂԲԻԻՐ ՏԱՐԱԶԻ ՆԻՒՐՆԵՐ

—

Աղբիւր-Տարագի մի մի օրինակ պ. Գէորգ Շահումեանը նվիրել է Թիւրքի հայոց ծխական ուսումնարանին։ Աղբիւրի մի օրինակ նվիրել է պ. Զաւադ-բէգ Բալուղեանը Օդեսայի համալսարանի հայ ուսանողութեան։

——

Մեր պատկերները

—

ՆԻԿՕԼԱՅ ՆԻԿՈԼԱՉԻ

Նիկօլաչէն իր ուսումն ստացել է Ռուսաստանում, այն ժամանակ, երբ հանգուցեալ Չերնիչևսկին և Դօբրօլիւբովը պատուելեան գաղափար էին ներչնչում ազգի մէջ։ Ահա դրանով խրախուսւած Նիկօլաչէն սկսեց ուսումնասիրել ռուսաց գրականութիւնը լաւ ուսումնասիրելուց յետոյ ուղևորւեց արևմտեան Եւրոպա, ուր ուսումնասիրեց ֆրանսիացոց, անգլիացոց և գերմանացոց գրականութիւնները, իւրացրեց եւրոպական փիլիսոփայութիւնը, սոցիալական դիտութիւնները և չնորհիւ այդ բազմակողմանի դիտութիւնների ուսումնասիրութեան՝ դարձաւ հրապարակախօս։

60-ական թուականներին վերադառնալով իր հայրենիք՝ սկսեց գրականութեամբ պարապել։ Նա գրել է բազմաթիւ հրապարակախօսութիւն-

ներ, ինչպէս վրացերէն նոյնպէս և ռուսերէն լեզուով։

Նրա խմբագրութեամբ հրատարակւում էին նախ „Обзоръ“ և յետոյ „Новое Обозрѣніе“ օրագիրները։

Ն. Նիկօլաձէն յայտնի է և հասարակական գործերում, նա հաստատեց Տղիբուլիի նախշիր ընկերութիւնը։ 1879 թ. սկսած քաղաքային իրաւասու է և անցեալ խօլերի ժամանակ հաստատելով II-րդ սանիտարական ընկերութիւն՝ դարձաւ նրա նախագահ և առանդով գործում էր էպիդեմիայի ժամանակ։ Նիկօլաձէին են վերագրում և այն հանգամանքը, որ քաղաքային Նաւթլուխի հին սալանդանողը այրեցին և նրա փոխարէն Օրթաճալայի կղզու վրայ չինեցին նորը։

——

ԻՇԽԱՆ ԻԼԻԱ ՁՈՒՃԱՒԱՁԷ

—

Իլիա Ճաւճաւաձէն ահա մօտ քառասուն տարի է, որ գործում է վրաց գրականական ասպարէզի վրայ։ Այդ տարիների ընթացքում նա գրել է բազմաթիւ ոտանաւորներ, վէպեր, իսկ նրա հրապարակախօսութիւնները ըսկսւում են այն ժամանակից երբ նա հրատարակեց «Իվերիա» ամսագիրը և այդ ամսագիրը դարձաւ օրագիր։ Նրա վէպերից նշանաւորներ են «Գլախնա նամօրթի» (Աղքատի պատմածը) և «Կացի ս ադամիանի?» (Մի թէ մարդ է ադամորթին?), որի թարգմանութիւնը տպւած է «Մուրճի» մէջ։ Նրա վէպերը և բանաստեղծութիւնները գրւածեն մաքուր վրացերէն լեզուով։

Իշխան Ճաւճաւաձէն իր ձեռքն է առել և բանկի գործը, որի չնորհիւ կազմել է և որոշ կուսակցութիւն։ Այդ կուսակցութիւնը գլխաւորապէս «Իվերիայ»-ի կուսակցութիւնն է։ Հարկաւոր է ուշադրացնել, որ այդ կուսակցութեան անդամները առհասարակ հին սերնդի ներկայացուցիչներ են, աւելի ազնւականներն ու իշխանները։

——

ԻՇԽԱՆ ԻՍԱՆԵ ՄԱՋԱՐԵԼԻ

—

Դա վրաց մէջ յայտնի է իր գրականական դործունէութեամբ և սուր գրչով։ Ժամանակով եղել է «Դրօէբա» (ժամանակ) լրագրի խմբագիր։ Նրա խմբագրութեամբ հրատարակւեց Շօթթա Ռուսթավելիի պատկերազարդ «Ընձհնաւորը» (Վէպխիս տղաւոսանի)։ Նա թարգմանել է Շէքսպիրի «Օտէլլօ», «Համլէտը», «Մակբէթը» և «Րիչարդ III»։

——

ԱՖՈՐԻԶՄՆԵՐ

—

Երջանիկ նա՝ է ով ծնողներից լիքը տուն է ժառանգել. դրան միայն պէտք է ծակկոցնէ ժառանգը։ Ամեն դործում սկսւածը դժւար է, բայց հա առաւել տուն դնելու մէջ։

—Մենք բոլորս անցեալով ենք ապրում և անցեալի պատճառով էլ կորչում։

—Գրականութիւնն է հատւածների հատւածը. ամենաանհնչան մասն այն ամենից, ինչ որ կատարել է, խօսել է, գրել է և գրւածի էլ ամենաանհնչան մասն է մնացել։

Ոչ ոք չի կարող իր յիշողութիւնից ջնջել մանկական տպաւորութիւնները։

Գեօթէ

Ամեն ազատութիւն, որ ինքն իրան սահմանափակել չըգիտէ, փոխւում է անիշխանութեան։

Շիլլո.

Որ օգուտն հասարակաց ինքն գրաւէ՝ նղովեալ է։

Սաադիս Շաղհւսի

Մեծութիւն յաւելու բարեկամս բաղումս և ապրատն և ի բուն բարեկամէ անտի փակի։

Սողոմոն

Ձշմարիտ պղտցումը ամօթխած է և թաղչող։

—Ինչ անուն ունի՝ դոյութիւն ունի։

—Ամեն քանքար անչուշտ առաջ կըրերէ չատ անքանքար նըմանուողներ։ N.

——

ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

—

Բազում. Կարա-Պոլա. — Շնորհակալ կըլինենք, եթէ ուղարկէք «Доброя дочь» բանաստեղծութիւնը։

Ս. Էջմիածին. Դ. Ա.—Ձեր յանձնաբարութիւնը աջողութեամբ կատարել ենք. ձեզ նամակ գրեցինք։

Լօնդօն. Մ. Հ.—Ձեղանից երկար ժամանակ նամակ չըստանալով, ուղղակի դիմեցինք Ֆաբրիկանտին։ Ե՞րբ կըստացւի, մեզ միջոցով է ուղարկւած, մի՞թէ վեց ամսւայ ընթացքում չէր կարելի հասցնել։ Ո՞ւր մնացին Գրիգոր Արծրունու պատկերները, ինչ ճանապարհով են ուղարկւած։

——

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԳՐԱՍԵՆԵԿԻՑ

—

Մի քանի հաստատութիւններ և պաշտօնական անձինք մինչև այժմ չեմ վճարել Աղբիւր-Տարագի ներկայ տարւայ բաժանորդագինը։ Այդ պատճառով Տարագի ներկայ համարից դադարեցնում ենք դրբանից մեր թերթին ուղարկել։

Խմբագրութիւնը բաւական չէ, որ ամեն անգամ յիշեցնէ բաժանորդներին իրանց պարտքը հատուցանելու համար։ Փառք Աստծոյ, որ ոչոք չի կարող տասներկու տարւայ ընթացքում մի օրինակ ընդել, որ մեր թերթերը ուղարկւել են մեկին, առանց նրա պատւէրի։ Դեռ 92 թւականին 8000 րուբլի ապառիկ՝ դանազան հիմնարկութիւնների, ուսումնարանների, ուսուցիչների, քահանաների և այլն պարտք մեր թերթե-

ըին կրակին տվինք։ Ժամանակ է, կարծում ենք, ով որ ուտանում է մեր թերթը վճարի իր պարտքը գոնէ այսուհետև։

—

Ադրիւբ-Տարազ միևնոյն հասցէով ստանող բաժանորդը, որը ձևոք է բերել և 8 պրէմիաները, կարող է ստանալ Վ.հատոր Հայրիկի պատկերը ճենապակու վրայ 3 ր., փոխարէն վճարելով 1 ր. և 1 րուբլի էր ճանապարհածախսի համար։ Ուսաի մինչև յունիսի 1-ը պէտք է յայտնէ իր ցանկութիւնը, որ կամենում է ստանալ այդ մեծ Ադբրունու պատկերը։ Այդ ժամանակից յետոյ այդ պատկերները կը վաճառուեն և Ադրիւբ-Տարազի բաժանորդների համար էլ Թիֆլիսում 3 ր., իսկ դրսի քաղաքներում չորս րուբլի։

Վերադիր վճարով (налож. плотеж.) պատկերները չեն ուղարկուում և այդ տեսակ պատուէրները մոռնում ենք անկատար։

Խմբագիր-Հրատարակիչ՝
Տիգրան Նազարեան

տեղեկատու

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱԻԱՍՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վօրօնցովի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից։

ԸՆԿԻՈՑՆԵՐԸ՝

Բ. Ս. Նաւասարդեան—11—12 ժ. վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հիւանդութիւնների։

Կ. Մ. Չիլովանի—9—10½ ժ. աչքի և նեարդային հ.

Պ. Պ. Բուդկովսկի—10½—11½ ժ. ներքին, երեխայոց և կանանց հ.

Ի. Ֆ. Պրօտասեվիչ—11½—12½ ժ. ականջի, կոկորդի, քթի և կրծքի հ.

Կին-բժիշկ Տուրքովիչ—12½—1 ժ. կանանց հ.

Ա. Պ. Կարապետեան—1—1½ երբին և երեխայոց հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ՝

Բ. Ե. Նաւասարդեան—7—7½ ժ-ի Ա. Ֆրանցիուս—7—7½ ականջի, կոկորդի և քթի ու նեարդային հիւանդութեան, չորեքշաբթի և ուրբաթ

Ա. Պ. Դուրկօ քիմի-խոշորացուցական հետազօտութեան է անում մէջը, ղի, լսելի, արեան, կաթի և այլն։

Վճար 50 կ.։ Համախորհուրդի (կօնսիլիում) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցումը ընդունում են և դիւերօթիկ հիւանդներ։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Նաւասարդեան։

ԾԱՆՈՒՑԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

С. Петербургскій комитетъ грамотности, продолжая сборъ по подпискѣ на устройство 100 безплатныхъ народныхъ читаленъ, при посредствѣ земствъ, имѣетъ честь довести до свѣдѣнія общества, что по 7 марта 1894 г. пожертвованій поступило всего 3641 р. 25 к.

Принося глубокую признательность жертвователямъ, камететь проситъ пожертвованія адресовать: С.-Петербургъ, Комитетъ Грамотности.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՇԻՐՎԱՆԶԱԴԻ

„ԱՐՄԷՆ ԴԻՄԱՔՍԵԱՆ“

վէպը

վաճառւում է հեղինակի մօտ. Тифлисъ, Ширванзадэ.

Գինն է ճանապարհի ծախսով

1 ր. 50 կ.

Լոյս տեսաւ

»ՀԱՆՐԱՄԱՏՅԵԼԻ ԲԺՇԿԱՐԱՆԻ»

առաջին հատորի երկ. տետրակը

Բովանդակութիւն

Հարինք (брюшной тифъ)—Խօլերա—Թանչք (крововый поносъ)—Անդրադարձ տենդ (возвратный тифъ) Ճահճային տենդեր (болотныя лихорадки)—կապոյտ հազ (коклюшъ)—ինֆլուէնցա։ Առաջին հատորի երրորդ և վերջին տետրակը, որի բովանդակութիւնն է «մարմոզական գործարանների հիւանդութիւնները»։

Լոյս կըտեսնի յուլիսին կամ օգոստոսին։

Բժշկարանի երկրորդ հատորը չի տպագրուի սակաւութիւն բաժանորդ ունենալու պատճառով։

Բաժանորդներս յետ կըստանան 1 ր.—50 կ. և կամ եթէ յանկութիւն յայտնեն բժշկարանի առաջին հատորը՝ որը բաղկացած կըլինի 350 երեսից։

Բաժանորդագրութիւնը դադարեցրած է։ Իմ հասցէն՝ помощнику Елисаветпольскаго губернскаго врача доктору Медицины Григорію Никитичу Теръ-Григорьянцъ въ г. Елисаветполь.

Բժշկապետ Տէր-Գրիգորեանց
(Թիֆլիսեցի)

(29) (5—3)

«ՀԱՅՐԵՆԻՔ»

Օրագիր

ԻՆ. ՏԱՐԻ 1894

Բաժանորդագինն է՝ (300 թուոյ համար) 25 ֆրանկ։

Հասցէն՝ Rédaction du journal „HAIRENIK“, Galata, Constantinople.

ՄԵՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՄԲ

Լոյս է տեսել արդէն Լոնդոնում և ստացել է Թիֆլիսում հիւսածոյի (ֆարֆորի) վրայ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԻԿԻ

ՄԵԾԱԴԻՐ (28×18 սանտ.) ՊԱՏԿԵՐԸ

օրերս կը լրացնի և

ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆՈՒՆԸ

Իւրաքանչիւր պատկերը պատրաստուած է այնպէս, որ պէտք չունի ոչ առանձին շրջանակի և ոչ էլ առանձին յենարանի: Այս պատկերները իրանց դեկեցկութեամբ, լինելով մեր երկրի համար չըտեսնուած նորութիւն, անշուշտ կը գրաւեն ամեհանուրը ճաշակ ունեցող դեղարուեստասէրի ուշադրութիւնն ու հրապոյրը:

ՊԱՏԿԵՐՆԵՐԸ ՍԵՂԱՆԻ ՎՐԱՅ ԴՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԵՆ

ԱՄԵՆ ՄԻ ՊԱՏԿԵՐԻ ԳԻՆԸ ԵՐԵՔ ՐՈՒԲԼԻ Է

Նա՝ ով «Աղբիւր-Տարազին» միանուագ բաժանորդ է գրուել, արէմիանովով հանդերձ, իրաւունք ունի այդ պատկերներից մի այն մի մի օրինակ ձեռք բերել, հատը 1 ր., վճարելով և ճանապարհածախսը:

ՎԱՃԱՌՈՒՄ ԵՆ

հետեւեալ ժիժաղիը պատկերները.

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԻԿ	,,	50
ԳԱՄԱՌ - ՔԱԹԻՊԱ	,,	40
ՐԱՓՓԻ	,,	40
Պ. ԱՊԱՄԲԵԱՆ	1	,,

Դուռարով առնողներին պիջուան կը լինի: Ուզարկուում է և վերադիր վճարով:

Դիմել՝ Тифлисъ, Саркису Согомонянцъ.

Վաճառում են

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԹՈՒՄԱՆԵԱՆԻ

1) **ԽՕԼԵՐ**, *վոլքվիլ մէկ արարուածով, գինն է 10 կ.*

2) **ԱՐԻՈՒԹԵԱՆ ԹԵԻԵՐԸ**, *պատկերապարզ (Թարգ.) գինն է 30 կ.*

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

ծայրագոյն պատրիարք եւ կաթողիկոս ամենայն հայոց

Տ·Տ· ՄԱՏԹԷՈՍ Ա·

ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿԻ

մեծադիր պատկերը (14/11 վերչոկ պատկեր, 20/14 վերչոկ թուղթ, ամենավերջին չորս տեսակ լուսանկարներից բաղդատած և իսկական լուսանկարի դոյնով, (վեց դոյնով) չքեղ ձեւերով, թանկագին թղթի վրայ:

Իւրաքանչիւր հատի գինն է մէկ ր., դուռարով գնողներին պիջուան:

Գլխաւորապէս վաճառւում են Дворцовая улица, магазинъ Зиберта (бывш. Ильцыхъ), *իսկ դուռարով առնողները և օտար քաղաքացիք թող գիմեն այս հասցէով՝* Тифлисъ, Багратіонская ул. домъ Захарбегова № 186. Г. Хрюси.

СЕЛЬСКОХОЗ. И ЭКОНОМ. ЕЖЕНЕДѢЛ. ЖУРН.

„ХОЗЯИНЪ“

Задача изданія—удовлатворять, по возможности полнѣе, назрѣвшей потребности въ серьезной разработкѣ практическихъ вопросовъ о постановкѣ русскаго хозяйства въ настоящемъ и будущемъ въ связи съ обзоромъ главнѣйшихъ экономическихъ и финансовыхъ факторовъ, а также съ указаніемъ выдающихся явленій общественной и государственной жизни.

ПРОГРАММА

I. Правительственныя распоряженія. II. Телеграммы. III. Статьи и обзоры по всѣмъ вопросамъ сельскаго хозяйства, политической экономіи, финансовъ, общественнаго и государственнаго хозяйства; статистика; добывающая и обрабатывающая промышленность, кустарное дѣло, торговля, пути сообщенія, землевладѣніе, кредитъ и денежное обращеніе. IV. Хозяйственное самоуправленіе; земское и городское хозяйство. V. Товарные и фондовые рынки. VI. Экономическая жизнь иностранныхъ государствъ. VII. Хроника сельскаго хозяйства въ Россіи и заграницей. VIII. Научные обзоры по сельскому хозяйству и связаннымъ съ нимъ отраслямъ. IX. Смѣсь, интересныя извѣстія, изобрѣтенія, рецептура, вопросы и отвѣты. X. Обзоры сельскохозяйственной литературы. Библіографія. **Приложенія:** оргинальныя и переводныя сочиненія, атласы, рисунки, чертежи. портреты дѣятелей въ области сельскаго хозяйства, образцы.

Къ изданію привлечены лучшія силы.

Редактированіе экономическаго отдѣла возложено на **А. П. Субботина**, сельскохозяйственнаго

на А. П. Мертваго.

ПОДПИСНАЯ ЦѢНА:

на годъ шестъ р. съ даст. и пер. (заграницу—девять р.) на полгода три р.; доп. разсрочка по рублю въ мѣсяцъ впередъ впродолженіе первыхъ шести мѣсяцевъ.

Адресъ. С.-Петербургъ, Невской 12, и Москва, Тріумфальная № 217 д. Даниловой.

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է 1894 ԹՎԱԿԱՆԻ ՀԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

XII ՏՄՐԻ **„ԱՂԲԻՒՐ ԵՒ ՏԱՐԱԶ“** ՏՄՐԻ V

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀԱՆԳԵՍՆԵՐԻ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄ ԵՆ ՆՈՅՆ ՈՒՂՂՈՒԹԵԱՄԲ, ԾՐԱԳՐՈՎ ԵՒ ՀԱՅ ՅԱՅՏՆԻ ԳՐԱԿԱՆ ՈՅԺԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԵԱՄԲ

«ԱՂԲԻՒՐԸ» լոյս է տեսնում ամիսը մի անգամ 2—3 թերթ, տարեկան 12 №№, իսկ «ՏԱՐԱԶԸ» շաբաթը մի անգամ, կիրակի օրերը 1—2 թերթ, տարեկան 50 №№

„ԱՂԲԻՒՐԻ“ *տարեկան գինը (առանց պրեմիաների)* 3 *ր.*

„ՏԱՐԱԶԻՆԸ“ *(առանց պրեմիաների)* 6 *ր. իսկ ամիսը* 50 *կոպ.*

„Աղբիւրի“ նպատակն է

Հայ մատաղ սերնդի մէջ զարթեցնել պատմա-սիրութեան զգացմունքները, զարգացնել հայ երեխաների մէջ սեր դէպի շրջապատողները, բարի նախանձ դէպի ամեն վսեմը, ազնիւը և առեղծ-ւածը դէպի ամեն մնասակարն ու չարը։

«ԱՂԲԻՒՐԻ» ասիները հաւաքում են ժողովրդական հէքիաթներից, զրոյցներից, լսածներից, առանդու-թիւններից, որոնք ուսումնասիրում մեր փորրիկ և քաղցր ընթերցողների սիրան ու հոգին, պարարտ հող պէտք է պատրաստեն ապագայում պտղաբեր սեր-մեր ածելու։

«ԱՂԲԻՒՐԻ» ամեն համարում տալու են կենսագրութիւններ մեծ մարդկանց, տեղագրական նամակներ մեր երկրի և վայրերի, հէքիաթներ, բանաստեղծութիւն, խաղեր, հանելուկ։ Ամենական հատորին յարմար շատ պատկերներ։

Պատկերազարդ „Տարազը“

Կը հաճոյանենք նկարների կողմից մայրաքաղաքներում հրատարակուղ շաբաթաթերթերի ճոխութեանը։ Բովանդակութեան կողմից պատկերազարդ «ՏԱՐԱԶԸ» ճոխ կը լինի և բազմակողմանի։ Վիպական մասը պատկերազարդ «ՏԱՐԱԶ»-ում նկարների հաւասար առաջին տեղը կը բռնէ, կը տպագրուին մի շարք պատմական և ժամանակակից վէպեր, հանդուցեալ ՐԱՖՖԻ, նրա թողած թղթակցին ձեռագրերից պ. պ. *Պռոշեանցի, Աղայեանցի, Շիրվանզադէի, Լէօ* և ուրիշների։

ԳԵՂԱՐՒԵՍՏԸ լինի նա արտայայտած բանաստեղծի վառ երեւակայութեամբ, հրաշագործ նկարչի վրձինով, թէ սիրտ տրոփացնող վիպագրի դրչով «ՏԱՐԱԶՈՒՄ» առաջին տեղը պիտի բռնէ։ Ինքնատուրիւն մեր առօրեայ կեանքի լինի նա արտայայտած վէպով, պատմածով, ֆելիետոնով, թէ կատակով «ՏԱՐԱԶԻ» գրական մասը պիտի կազմէ։

Կանանց խնդիրը, լուսաւորեալ և մեր աշխարհի կնոջ վիճակը, դրութիւնը արդի ընդհանուր գրականութեան մէջ տիրապետող այդ խնդրի վերաբերեալ վիճաբանութիւնների հետեւանքը պարբերաբար կարձանագրուին Տարազում։

Տարազի մի երրորդական մասը կը կազմեն պատկերներ, նկարներ, տեսարաններ, թէ արդի և թէ անցած գնացած, գլխաւորապէս մեր կեանքի։ Հայ կինը ամեն ամիս Տարազում կը գտնէ եւրոպական նորագոյն կար ու ձեւի, ձեռագործի վերաբերեալ նկարներ բացատրութիւններով։

„ԱՂԲԻՒՐ—ՏԱՐԱԶԻ“

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿՈՒՄ

վաճառւում են

ԲԱՑԱՌԱՊԷՍ ՄԵՐ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ

«ԱՂԲԻՒՐԻ»

1. Տիեզերահռչակ ՌԱՓԱՅԵԼԻ Դրէզդինեան գալլերէն *Մաղնայ և Հրեշտակաների* փոքրագիր պատճէնները լուսօ-օլիօգրաֆիա եւ լուսօ-ֆոտոտիպ *չորս* պատկեր։

2. ՐՈՒԲԵՆՍԻ *Ցիսուս եւ Տիրամայր* երկու լուսօ-օլիօգրաֆիա։

«ՏԱՐԱԶԻ»

3. Մի շատ գեղեցիկ ակաւել լուսօ՝ «ԲԵՐԿՐԱՆՔ» պատկեր։

4. ՇԵՔՈՊԻՐԻ *Ռամէօ և Ջուլիէթ* պիէսից (օպէրայից) մի Թափանցիկ նկար լոյսի դէմ կախելու։ Կարող է ծառայել եւ ձգել էկրան ճրագի լամպի դէմ։

Ընդամենն ուր պատկեր ճանապարհածախսով արժեն 5 րուբլի

Дозволено цензур. Тифлисъ 21-го мая 1894 года

Скоропечатная М. Мартиросянцъ и К°. Мих. ул.